Փոստային կապի ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր

**Contract**
**on Provision of Payable Postal Services**

«ՀԱՅՓՈՍՏ»

Փակ Բաժնետիրական Ընկերություն

և

ՀՀ բնապահպանության նախարարություն

**"HAYPOST"**

**Closed Joint Stock Company**

and

**Ministry of the Nature Protection of the RA**

Սարյան 22, Հայփոստ

Երևան,

Հայաստանի Հանրապետություն

22 Saryan Str, Haypost

Yerevan,

Republic of Armenia

| Փաստաթղթի տեսակը | Համարը | Կնքման ամսաթիվը | Document Type | Number | Signing date |
|---|---|---|---|---|---|
| **POSTAL** | PD-111-02-18 | 14.02.2018թ. | **POSTAL** | PD-111-02-18 | 14 .02.2018 |

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետ սույն պայմանագրի իմաստով՝ Կատարող կամ Ընկերություն)՝ ի դեմս գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանի, մի կողմից, և ՀՀ բնապահպանության նախարարությունը (այսուհետ սույն պայմանագրի իմաստով՝ Պատվիրատու կամ Հաճախորդ)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ. Հովհաննիսյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

"HAYPOST" Closed Joint-Stock Company, which was formed in compliance with the laws of the Republic of Armenia, being the National Postal Operator of Armenia registered and is located at the address 22 Saryan street, Yerevan 0002, Republic of Armenia, located at the same address (hereinafter referred to as Executor or Company), represented by Haik Avagyan, Acting Chief Executive Officer, on the one hand and Ministry of the Nature Protection of the RA (hereinafter referred to as Customer or Client) represented by H. Hovhanniyan, Chief of Staff, on the other hand, signed this Contract as follows:

## Գլուխ 1. Պայմանագրի առարկան

1.1 Կատարողը (Ընկերությունը) պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններով Պատվիրատուի (Հաճախորդի) առաջադրանքով մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն (Հաճախորդը) պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններով ընդունել ծառայությունները և վճարել դրանց դիմաց:

1.2 Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով և փոստային կապի ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով Հաճախորդին մատուցել փոստային կապի ծառայություններ, այդ թվում՝ արագընթաց փոստային ծառայություններ (EMS) և հեռագրային ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ կամ փոստային կապի ծառայություններ):
Փոստային կապի ծառայությունների, այդ թվում՝ արագընթաց փոստային ծառայությունների (EMS) և հեռագրային ծառայությունների բնութագրերը սահմանված են փոստային կապի ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:

1.3 Ընկերությունը, որպես Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (նշանակված օպերատոր) Փոստային կապի ծառայությունները մատուցելիս առաջնորդվում է փոստային կապի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով, որոնցով տվյալ տեսակի ծառայությունների համար սահմանված են ծառայությունների մատուցման որոշակի պայմաններ ու ժամկետներ:

## CHAPTER 1. SUBJECT OF CONTRACT

1.1 The Executor (Company) is obliged to render the services under Clause 1.2 of the present Contract at the request of the Customer (Client), and the Customer (Client) is obliged to accept the services under the present Contract and pay for them.

1.2 The Company is obliged to provide the Client with postal services in compliance with the conditions and order defined by the present contract. the legislation of the Republic of Armenia, regulating the field of the postal communication, the international agreements and other legal acts of the Republic of Armenia, including the express mail services (EMS) and telegraph services (hereinafter referred to as Services or Postal Services).
The specifications of the postal services, incluing the EMS services and telegraph services are defined in the legislation of the Republic of Armenia regulating the postal field, the international agreements of the Republic of Armenia and other legal acts based on them.

1.3 The Company, as the National Postal Operator of the Republic of Armenia (Designated Operator), while providing the Services of postal communication, shall be guided by the legislation of the Republic of Armenia, regulating the postal communication activity, the international agreements and other legal acts of the Republic of Armenia, which define certain terms and conditions of provision of services for the given kind of services.

## Գլուխ 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**2.1 Ընկերությունը պարտավոր է՝**

2.1.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով՝ սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.

2.1.2 Ծառայությունները մատուցել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով նախատեսված փոստային կապի ծառայությունների մատուցման պայմաններին համապատասխան.

2.1.3 Սույն պայմանագրով սահմանված կարգով Հաճախորդի կողմից Ծառայությունների մատուցման վերաբերյալ գրավոր բողոքներ ստանալու դեպքում, քննարկել դրանք և գրավոր պատասխան

## CHAPTER 2. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES

**2.1 The Company is obliged to:**

2.1.1 Provide the Services in the proper quality, according to the conditions of this Contract;

2.1.2 Provide the Services in compliance with the conditions envisaged for provision of postal services under the Legislation of the Republic of Armenia, international agreements and other legal acts of the Republic of Armenia;

2.1.3 In case of the receipt of written complaints from the Client concerning the provision of Services, in the procedure defined under the present Contract, discuss

ներկայացնել Հաճախորդին ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ.

2.1.4 Հաճախորդի ցանկությամբ պարզաբանումներ ներկայացնել Ծառայությունների մատուցման պայմանների և ժամկետների վերաբերյալ.

2.1.5 Սույն պայմանագրով նախատեսված փոստային կապի ծառայությունների մատուցման սակագների փոփոխությունների դեպքում, այդ թվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու պետական մարմնի կողմից փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման (փոփոխման) դեպքում ապահովել նշված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը Հաճախորդին՝ սույն պայմանագրով սահմանված պայմաններով.

2.1.6 Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով փոստային կապի ծառայությունների մատուցման պայմաններում փոփոխություններ կատարվելու դեպքերում ապահովել համապատասխան փոփոխությունների վերաբերյալ իրազեկումը Հաճախորդին՝ սույն պայմանագրով սահմանված պայմաններով.

2.1.7 Կատարել սույն պայմանագրով սահմանված իր այլ պարտավորությունները:

## 2.2 Ընկերությունն իրավունք ունի՝

2.2.1 Պահանջել Հաճախորդից՝ սույն պայմանագրով նրա կողմից ստանձնած վճարման և այլ պարտավորությունների պատշաճ կատարում.

2.2.2 Ցանկացած ժամանակ առանց լուծելու սույն պայմանագիրը նախնական ծանուցմամբ, միակողմանի, ժամանակավորապես կասեցնել սույն պայմանագրով սահմանված որոշ կամ բոլոր պարտավորությունների կատարումը, եթե Հաճախորդը չի կատարում կամ ոչ պատշաճ կերպով է կատարում Ծառայությունների ընդունման, դրանց դիմաց վճարման պարտավորությունները կամ սույն պայմանագրով նախատեսված իր այլ պարտավորությունները: Սույն ենթակետով նախատեսված դեպքերում Ընկերությունն իր ծանուցմամբ սահմանում է այն ժամկետը, որի ընթացքում Հաճախորդը պարտավոր է վերացնել իր կողմից թույլ տրված պայմանագրի պայմանների խախտումները: Եթե Հաճախորդը չի վերացնում խախտումը սույն ենթակետով նախատեսված՝ Ընկերության կողմից ծանուցմամբ սահմանված ժամկետում, Ընկերությունը կարող է լուծել սույն պայմանագիրը և պահանջել Հաճախորդից վնասների հատուցում.

2.2.3 Իրականացնել սույն պայմանագրով սահմանված իր այլ իրավունքները:

## 2.3 Հաճախորդը պարտավոր է՝

2.3.1 Սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով ընդունել Ընկերության կողմից մատուցված Ծառայությունները և վճարել դրանց դիմաց՝ Ընկերության սահմանած Ծառայությունների գներին (սակագներին) համապատասխան, իսկ փոստային կապի ունիվերսալ ծառայությունների համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու պետական մարմնի կողմից սահմանված սակագներին համապատասխան.

2.3.2 Ընկերության կողմից մատուցվող Ծառայությունների որակի կամ այլ պայմանների վերաբերյալ բողոքներ ունենալու դեպքերում անհապաղ տեղեկացնել դրանց մասին Ընկերությանը՝ պահպանելով սույն պայմանագրի 5.3 կետով և 2.3.3 ենթակետով սահմանված պայմանները.

2.3.3 Որևէ սխալ կամ ոչ հավաստի (չճշտված), ինչպես նաև առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկություն չտարածել

them and submit a written reply to the Client on the measures undertaken;

2.1.4 Upon the wish of the Client, submit clarifications on the terms and conditions of the provision of Services;

2.1.5 In case of changes of the service provision tariffs under the present Contract, including the definition (change) of postal universal service tariffs made by an authorized state body in the procedure defined under the Legislation of the Republic of Armenia, ensure the access to the information about the mentioned changes for the Client, in compliance with the conditions defined under the present Contract;

2.1.6 In case of changes made in the conditions of postal service provision by means of international agreements ratified by the Republic of Armenia, or the Legislation or other legal acts of the Republic of Armenia, ensure the awareness of the Client on the corresponding changes made under the conditions defined by the present Contract:

2.1.7 Implement other obligations defined by the present Contract.

## 2.2 Company shall have the right to

2.2.1 Demand from the Client proper fulfillment of the payment and other obligations undertaken by the present Contract:

2.2.2 To cancel anytime unilaterally and temporarily the implementation of certain or all the obligations of the present Contract by a preliminary notification without dissolving the present Contract in case of non-implementation or improper implementation by the Client of the obligations of service acceptance, payment for Services or other obligations envisaged by the present Contract. In the cases envisaged by the present sub clause, the Company defines by its own notification the period, during which the Client is obliged to eliminate the breaches made in the terms of the Contract. In case of non-elimination of the breach in the period defined by the Company's notification envisaged by this sub clause, the Company may dissolve the present Contract and demand the Client to compensate the damages;

2.2.3 Realize other rights as stipulated in this Contract.

## 2.3 The Client is obliged to

2.3.1 Accept the Services rendered by the Company and pay against those as stipulated under the terms and conditions of this Contract, in accordance with the prices (tariffs) of Services defined by the Company, and in case of universal postal services, in accordance with the tariffs defined by the authorized state body, assigned by the Legislation of the Republic of Armenia;

2.3.2 In case of having complaints against the quality or other conditions of the Services provided by the Company, inform the Company thereof without delay, implementing the conditions under Clause 5.3 and Sub-Clause 2.3.3 of this Contract;

2.3.3 Not to disseminate any incorrect or unauthentic (unverified) information (by public or non-public means)

(հրապարակային կամ ոչ հրապարակային եղանակով) Ընկերության և Ընկերության կողմից մատուցվող Ծառայությունների որակի և այլ պայմանների վերաբերյալ.

2.3.4 Պահպանել փոստային կապի ծառայություններից օգտվողների համար «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կանոնները, այդ թվում առաքանիների ներդրանքին և այլ պայմաններն վերաբերող կանոնները.

2.3.5 Կատարել սույն պայմանագրով սահմանված իր այլ պարտավորությունները:

concerning the Company and the quality and other conditions of the Services rendered by the Company;

2.3.4 To fulfill the rules envisaged for the users of postal services by RA Law "On Postal Communication" and by the international agreements of the Republic of Armenia, including the rules concerning the items' insert and other conditions;

2.3.5 Implement other obligations undertaken by the present Contra

**2.4. Հաճախորդն իրավունք ունի՝**

2.4.1 Պահանջել Ընկերությունից Ծառայությունները մատուցել ժամանակին և պատշաճ կարգով՝ սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.

2.4.2 Տեղեկատվություն ստանալ մատուցված Ծառայությունների կամ Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ.

2.4.3 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու պետական մարմնի կողմից փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման (փոփոխման) կամ սույն պայմանագրով մատուցվող փոստային կապի այլ ծառայությունների սակագների Ընկերության կողմից փոփոխման հետ համաձայն չլինելու դեպքում լուծել սույն պայմանագիրը՝ նախապես կատարելով վերջնահաշվարկ և այդ մասին նախապես 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնելով Ընկերությանը.

2.4.4 Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով փոստային կապի ծառայությունների մատուցման պայմաններում փոփոխություններ կատարվելու դեպքերում՝ կատարված փոփոխությունների հետ համաձայն չլինելու հիմքով լուծել սույն պայմանագիրը՝ նախապես կատարելով վերջնահաշվարկ և այդ մասին նախապես 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնելով Ընկերությանը.

2.4.5 Իրականացնել սույն պայմանագրով սահմանված իր այլ իրավունքները:

**2.4 The Client shall have the right to**

2.4.1 Demand from the Company to render the Services in a timely and proper manner, in accordance with the conditions under this Contract;

2.4.2 Receive information on the Services provided or the progress of the Services provided;

2.4.3 In case of not agreeing with the definition (change) of the universal postal service tariffs made an the authorized state body, in the procedure under the Legislation of the RA, or change of tariffs of other postal services provided under this Contract, made by the Company, dissolve this Contract, making a final settlement prior to that and informing the Company within 5 days in advance;

2.4.4 In case of not agreeing with the changes in the conditions of the postal service provision according to international agreements ratified by the Republic of Armenia or the Legislation or other legal acts of the Republic of Armenia, dissolve this contract on the basis of not agreeing, making final settlement prior to that and informing the Company within 5 days in advance;

2.4.5 Realize other rights as stipulated in this Contract.

## Գլուխ 3. Ծառայությունների հանձնում-ընդունումը, Պայմանագրի գինը, Ծառայությունների մատուցման գները (սակագները) և վճարման կարգը

3.1 Սույն պայմանագրով նախատեսված փոստային կապի ծառայությունների, այդ թվում Արագընթաց փոստային ծառայությունների (EMS) և հեռագրային ծառայությունների մատուցման գները (սակագները) սահմանվում և (կամ) փոփոխվում են Ընկերություն կողմից, իսկ փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագները սահմանվում և (կամ) փոփոխվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու պետական մարմնի կողմից: Սույն կետում նշված գները (սակագները) Հաճախորդին տրամադրվում են Ընկերության ինտերնետային կայքի (www.haypost.am հասցեով) կամ Ընկերության փոստային բաժանմունքների միջոցով: Գների (սակագների) հետագա փոփոխությունների դեպքում Հաճախորդը տեղեկացվում է այդ մասին սույն պայմանագրով սահմանված կարգով:

3.2 Սույն պայմանագրի առավելագույն գինը սահմանվում է 450 000 **/չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն**: Սույն կետում նշված գումարը ներառում է Ընկերության կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Սույն կետով նախատեսված գումարի շրջանակներում Հաճախորդն իրավունք ունի առանց սահմանափակումների օգտվել ընկերության կողմից մատուցվող՝

## CHAPTER 3. DELIVERY AND ACCEPTANCE OF THE SERVICES, SERVICE PRICES (TARIFFS) AND PAYMENT PROCEDURE

3.1 The prices (tariffs) of the postal services envisaged by this Contract, including the express mail services (EMS) and telegraph services, shall be defined and (or) changed by the Company, and the universal postal service provision tariffs shall be defined and (or) changed by an authorized state body assigned by the Legislation of the Republic of Armenia. The prices (tariffs) under this sub clause shall be provided to the Client by means of the Company's website (address: www.haypost.am) or the Company's post offices. In case of further changes of the prices (tariffs) the Client shall be informed about it in compliance with the procedure under this Contract.

3.2 The maximum price of this Contract is determined **450 000 AMD, VAT included**. The present amount includes all the costs undertaken by the Company. The Client has the right to use all the Services provided by the Company under the present Contract with no restrictions, in the frames of the amount envisaged by this Clause.

սույն պայմանագրով նախատեսված Ծառայություններից: Միանգամյա առաքումների քանակներով պայմանավորված (մեծածավալ առաքումների դեպքում) Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդին առաջարկել օգտվելու մեծածավալ փոստի ընդունման համար նախատեսված ընկերության մասնագիտացված փոստային բաժանմունքներից:

3.3 Սույն պայմանագրով նախատեսված փոստային կապի ծառայության դիմաց վճարումը հավաստվում է, եթե փոստային առաքանու վրա փակցված է համապատասխան նամականիշ, և տվյալ առաքանին ընդունվել է Ընկերության կողմից:

3.4 Սույն պայմանագրի գործողության ընթացքում փոստային կապի ծառայություններից օգտվելու նպատակով Հաճախորդը ցանկացած ժամանակ իրավունք ունի դիմել և Ընկերությունից ստանալ նամականիշեր և/կամ ծրարներ՝ նախապես վճարելով դրանց դիմաց:

3.5 Փոստային նամականիշեր և/կամ ծրարներ, ձեռք բերելու նպատակով Հաճախորդը հայտ է ներկայացնում Ընկերությանը, որի ձևը կցված է սույն պայմանագրին որպես Հավելված 1: Ընկերությունը բավարարում է Հաճախորդի հայտը և վերջինիս տրամադրում է պատվիրված նամականիշերը, փոստային վճարման այլ նիշերը և/կամ ծրարները, եթե Ծառայություններից օգտվելու նպատակով Հաճախորդի կատարած կանխավճարը բավարարում է պատվերն իրականացնելու համար: Սույն կետով նախատեսված հայտը Հաճախորդի կողմից կարող է ներկայացվել փաստաթղթային եղանակով՝ փոստային առաքման կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ էլեկտրոնային եղանակով՝ սույն պայմանագրում նշված Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեից Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեին հայտի սքանավորված պատճեն ուղարկելու միջոցով:

3.6 Սույն պայմանագրով նախատեսված բոլոր տեսակի Ծառայություններից օգտվելու նպատակով յուրաքանչյուր ամսվա համար Հաճախորդն Ընկերության՝ սույն պայմանագրով նշված բանկային հաշվին փոխանցում է կանխավճար, որի չափը որոշվում է Հաճախորդի կողմից՝ տվյալ ամսվա ընթացքում պատվիրվող Ծառայությունների կանխատեսվող արժեքին համապատասխան: Կանխավճարի սպառվելու դեպքում Ընկերությունը ժամանակավորապես կասեցնում է Ծառայությունների մատուցումը՝ մինչև Հաճախորդի կողմից կանխավճարի փոխանցումն Ընկերությանը:

3.7 Սույն պայմանագրի շրջանակներում Հաճախորդի առաջարկությամբ Ընկերությունը կարող է համաձայնություն տալ Ծառայությունների մատուցումն իրականացնել կանխավճարի սպառված լինելու դեպքում, եթե Հաճախորդի կողմից վճարման ժամկետի վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկությունն ընդունվել է Ընկերության կողմից: Սույն կետով սահմանված դեպքում վճարման վերջնաժամկետը լրանալուց հետո Ընկերությունը կարող է կասեցնել Ծառայությունների մատուցումը և պահանջել Հաճախորդից վճարել մատուցված Ծառայությունների դիմաց, ինչպես նաև Հաճախորդի նկատմամբ կիրառել տույժ՝ սույն պայմանագրով սահմանված չափերով:

3.8 Յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատուցված Ծառայությունների համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը Ընկերությունը կազմում և Հաճախորդին է ներկայացնում Ծառայությունների մատուցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան հաշվարկային փաստաթուղթ (հարկային հաշիվ) և հաշվետու ամսվա ընթացքում մատուցված Ծառայությունների վերաբերյալ հաշվետվություն, որում առանձին տողով նշվում է Հաճախորդի տրամադրած կանխավճարից կատարված նվազեցման մասին տեղեկատվություն: Մատուցված Ծառայությունների վերաբերյալ հաշվետվությունը կազմվում է հաշվետու ամսվա ընթացքում Ընկերության և Հաճախորդի միջև ստորագրված առաքանիների հանձնման-ընդունման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի հիման վրա:

3.9 Ներկայացված հաշվարկային փաստաթուղթը ենթակա է հաստատման Հաճախորդի կողմից՝ այն ստանալուց հետո 3

Depending on the quantities of one-time deliveries (in case of sizeable items), the Company has the right to propose the Client to use the services of the Company's specialized post offices, meant to accept sizeable post.

3.3 The payment for postal services determined by this Contract is certified if there is a relevant stamp on the postal item and the given item has been accepted by a post office.

3.4 For the effective period of this Contract, in order to receive postal services, the Client shall have the right to apply for and receive stamps and/or envelopes from the Company anytime by paying for them in advance.

3.5 In order to purchase postage stamps and/or envelopes, The Client submits an application to the Company, the sample of which is attached to this Contract, in the Annex 1. The Company approves the Client's application and provides the Client with the required stamps, other postage marks and/or envelopes, if the prepayment made by the Client in order to use the Services suffices for the implementation of the application. The application envisaged by this Clause can be submitted by the Client in paper, by means of postal or hand delivery, or via e-mail, by sending the scanned version of the application from the Client's e-mail mentioned in this Contract to the Company's e-mail.

3.6 For all the Services envisaged by the present Contract the Client shall transfer a prepayment for each month to the Company's bank account mentioned in this Contract. The prepayment amount is defined by the Client, according to the expected value of the Services ordered for the given month. If the whole prepayment is spent, the Company temporarily cancels the provision of Services, till the Client transfers the prepayment to the Company.

3.7 Within the framework of this Contract, the Company can agree to carry out the provision of Services at the Client's proposal while the prepayment is spent, if the written proposal concerning the payment deadline submitted by the Client has been accepted by the Company. In the case envisaged by this Clause, after the expiration of the payment deadline the Company can cancel the provision of Services and demand the Client to pay for the Services provided, as well as subject the Client to penalty at the rate envisaged by this Contract.

3.8 The Company compiles and submits to the Client before the tenth business day of the following month a corresponding settlement document about the provision of Services (invoice) envisaged by the Legislation of the Republic of Armenia and a report concerning the services provided during the month under report for the Services provided during each month. The report includes a separate row containing information about the amount reduced from the prepayment provided by the Client. The report concerning the provided Services is being compiled during the month under report, on the basis of the corresponding documents about the delivery and acceptance of items, signed between the Company and the Client.

3.9 The submitted settlement document is subject to be approved by the Client within 3 (three) business days

(երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվարկային փաստաթղթում անհամապատասխանություններ հայտնաբերվելու դեպքում Հաճախորդը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել Ընկերությանը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Կողմերը պարտավորվում են քննարկել այդ անհամապատասխանությունները Հաճախորդի համապատասխան գրավոր ծանուցումն Ընկերության կողմից ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Անհամապատասխանությունների ճշգրտման վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու դեպքում Հաճախորդը հաստատում է հաշվարկային փաստաթուղթն ու ուղարկում է դրա մեկ օրինակն Ընկերությանը՝ ոչ ուշ քան համաձայնության գալու օրվան հաջորդող 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթուղթ (հարկային հաշիվ) դուրս գրելու դեպքում գործընթացներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

after having received it. In case of revealing discrepancies in the settlement document, the Client shall inform the Company about it in written within 3 (three) business days. The Parties undertake to discuss the mentioned discrepancies within 3 (three) business days after having received the corresponding written notification of the Client.

In case of coming to agreement concerning the correction of discrepancies, the Client approves the settlement document and sends one of its copies to the Company not later than on the 3rd (third) business day after coming to agreement.

In case of issuing the settlement document (invoice) in electronic version, the processes are carried out in compliance with the procedure envisaged by the Legislation of the Republic of Armenia.

3.10 Սույն պայմանագրի շրջանակներում փոստային կապի, այդ թվում՝ Արագընթաց փոստային ծառայության (EMS) միջոցով առաքվող փոստային առաքանիների հանձնում-ընդունումն իրականացվում է Ընկերության համապատասխան փոստային բաժանմունքներում, որոնց ցանկը հրապարակված է Ընկերության ինտերնետային կայքում և կարող է տրամադրվել Հաճախորդին վերջինիս կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում:

3.10 The acceptance and delivery of postal items delivered by means of postal communication, including express mail service (EMS), within the framework of this contract, are carried out at the Company's relevant post offices, the list of which is presented on the Company's website and can be provided to the Client at the latter's request.

3.11 Առաքանիների հանձնման-ընդունման արդյունքում Կողմերը ստորագրում են Ընկերության կողմից սահմանված ձևի փաստաթուղթ, որի մեկ օրինակը տրվում է Հաճախորդին:

3.11 As a result of the delivery and acceptance of items, the Parties sign a document defined by the Company, a copy of which shall be issued to the Client.

3.12 Սույն պայմանագրով Հաճախորդը պարտավորվում է իր կողմից՝ սույն պայմանագրի շրջանակներում ձեռք բերված նամականիշերն ու փոստային վճարման այլ նիշերն օգտագործել բացառապես փոստային կապի ծառայություններից օգտվելու նպատակով:

3.12 Under this Contract the Client shall be obliged to use stamps and other marks of postal payment purchased within the framework of this Contract solely for postal services.

## Գլուխ 4. Կողմերի պատասխանատվությունը

## CHAPTER 4. RESPONSIBILITY OF THE PARTIES

4.1 Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված նորմերին համապատասխան: Ընկերությունը, որպես Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր, փոստային ծառայությունների մատուցման առնչությամբ պատասխանատվություն է կրում բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով: Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում կիրառվող տույժերի և տուգանքների չափերը չեն կարող պակաս լինել պետական գնումների գործընթացը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տուժանքների չափերից:

4.1 The Parties shall be held liable for non-fulfillment or improper fulfillment of their contractual obligations in compliance with the Laws of the Republic of Armenia and norms defined in the international agreements of the Republic of Armenia. As national postal operator of the Republic of Armenia, the Company is held liable for provision of postal services solely in compliance with the procedure and conditions determined by the Laws and international agreements of the Republic of Armenia. The fines and penalties applied in case of the non-fulfillment or improper fulfillment of the obligations under this Contract cannot be less than the penalties defined by the legislation of the Republic of Armenia, regulating the process of state procurements.

4.2 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում, եթե հասցեատիրոջը փոստային առաքանիները չեն առաքվել ոչ ստույգ և/կամ ոչ լիարժեք առաքման հասցեի, հասցեի փոփոխության, ինչպես նաև հասցեատիրոջ բացակայության կամ Ընկերությունից անկախ այլ պատճառով: Փոստային առաքանու վնասվելու կամ կորստի դեպքերում, Հաճախորդի իրավունքների իրականացումը կատարվում է փոստային կապի ծառայությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

4.2 The Company is not held liable if the postal items have not been delivered to the addressees for the reason of unclear and/or incomplete delivery address, if the address has been changed, as well as the addressee's absence or any other reason not depending on the Company. In cases of damage or loss of the postal item, the Client's rights are fulfilled in the procedure under the RA Legislation regulating postal services, international agreements and other legal acts of the RA.

4.3 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի հանգամանքների ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն

4.3 The Parties shall be released from any liability for non-fulfillment or partial fulfillment of their obligations under this Contract, if it has been caused due to a force majeure event, appeared after the conclusion of the present

պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել:

4.4 Սույն պայմանագրով ստանձնած փոստային կապի ծառայությունները ոչ պատշաճ մատուցելու, այն է՝ փոստային առաքանու կորստի, վնասվածքի կամ ներհանրապետական ծառայությունների դեպքում՝ առաքման հսկիչ ժամկետները խախտելու դեպքերում, Ընկերությունը պատասխանատվություն է կրում «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, իսկ միջազգային փոստային կապի ծառայությունների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով:
Հաճախորդի կողմից սույն պայմանագրի 3.7 կետով նախատեսված՝ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետի խախտման դեպքում Ընկերությունը կարող է Հաճախորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05%-ի չափով:
Տույժերի և /կամ/ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու պարտավորությունից:

4.5 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման հսկողության և/կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Ընկերությունը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և տվյալներ/, որի արդյունքում Ընկերությանը հաղթող ճանաչելու /ընտրելու/ մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Հաճախորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, սույն կետով նախատեսված պայմանագրի միակողմանի լուծման դեպքում, Հաճախորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Ընկերության համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Ընկերությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Հաճախորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Հաճախորդի ստացվածով:

4.6 Փոստային կապի, այդ թվում՝ Արագընթաց փոստային կապի (EMS) ծառայությունների միջոցով արտասահմանյան երկրներ ուղարկվող առաքանիների անցման մոտավոր ժամկետները հրապարակվում են Ընկերության ինտերնետային կայքում կամ կարող են տրամադրվել Հաճախորդին Ընկերության համապատասխան փոստային բաժանմունքների միջոցով: Սույն կետում նշված առաքանիների անցման ժամկետների համար Ընկերությունը պատասխանատվություն չի կրում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում առաքանիների անցման հսկիչ ժամկետների խախտման դեպքերի: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում նաև այլ պետությունների, այդ թվում՝ տարանցիկ կամ նշանակման վայրի պետությունների փոստային կապի նշանակված (ազգային) օպերատորների կողմից առաքանիների անցման ժամկետների (տվյալ պետություններում գործող հսկիչ ժամկետների) խախտման համար:

4.7 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների մաքսային մարմինների կողմից փոստային առաքանու անցումն արգելելու համար, այդ թվում՝ առաքանու մուտքը տվյալ պետության տարածք արգելելու, առաքանին առգրավելու կամ բռնագրավելու կամ առաքանին ոչնչացնելու համար:

Contract and impossible to be prevented or envisaged by the Parties.

4.4 In case improper provision of services assumed by this Contract, that is: postal item's loss, damage, or, in case of domestic services, violation of the control deadlines of delivery, the Company shall be held responsible in the order determined by the Article 19 of RA Law "On Postal Communication", and in case of international postal services, in the order determined by the international agreements of the RA.
In case the Client breaks the time period envisaged by the Parties' consent under Clause 3.7 of this Contract, the Company may charge the Client a penalty for each delayed day, equal to 0,05 % of the amount to be paid, but failed to have been done so.
The payment of the penalties and /or/ fine does not release the Parties from the entire fulfillment of their Contract obligations.

4.5 If the supervision and/or control of the RA Legislation implementation or complaint investigation, made in accordance with the procedure under the RA Law "On Procurement", reveal that the Company submitted false documents (information and data) in the process of procurement, before signing the present Contract, in the consequence of which the decision on recognition (selection) of the Company as a winner does not correspond to the Legislation of the Republic of Armenia, in this case the Client has the right to dissolve the Contract unilaterally after identification of the above-mentioned grounds if the disclosure of the fixed violations before signing the present Contract would serve as basis for not signing this Contract in accordance with the RA Legislation on procurements. In addition, the Client does not bare the risk of damage or benefits loss, arising towards the Company as a result of the unilateral dissolution of the Contract under this Clause, and the Company is obliged to reimburse the damages incurred by the Client in the procedure under the Legislation of the Republic of Armenia, in the size which is not covered by the size received by the Client through the implementation of the present Contract before dissolution.

4.6 The approximate delivery deadlines of the items sent to abroad by means of postal communication, including express mail services (EMS), are presented on the Company's website or provided to the Client by means of the corresponding post office of the Company. The Company is held no liability for the delivery deadlines of items under this Clause, unless the delivery deadlines of items are violated in the territory of the Republic of Armenia. The Company is not held liable for the violation of the delivery deadlines of items by the designated (national) operators of postal communication of other countries, including the countries of transit or destination (it means, violation of deadlines valid in the mentioned countries).

4.7 The Company is held no liability for prohibition of the postal item's trajectory by the Customs of the Republic of Armenia or other countries, including: prohibition of the items' access to the territory of certain country; confiscation or expropriation of item; destruction of item.

4.8 Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից առաքանու անցումն արգելելու դեպքում Ընկերությունը Հաճախորդից պահում է ներհանրապետական փոստային կապի ծառայության համար սահմանված և տվյալ քաշի առաքանու համար հաշվարկված սակագինն ու Հաճախորդին վերադարձնում է ծառայության դիմաց վճարված մնացած գումարը: Այլ պետությունների մաքսային մարմինների կողմից առաքանիների անցման արգելքի դեպքում Հաճախորդին չի վերադարձվում Ծառայության դիմաց վճարված գումարը:

4.8 If the item's trajectory is prohibited by the Customs of the Republic of Armenia, the Company levies the tariff envisaged for domestic postal service and calculated for the item of certain weight from the Client and returns the rest of the amount paid for the service to the Client. If the item's trajectory is prohibited by the Customs of other countries, the amount paid for the Service is not being returned to the Client.

## Գլուխ 5. Գաղտնիություն

## CHAPTER 5. CONFIDENTIALITY

5.1 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ընթացքում Ընկերությունը պարտավորվում է ապահովել Հաճախորդի՝ փոստային կապի ծառայություններից օգտվելու գաղտնիության իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտերին համապատասխան:

5.1 Within the period of provision of Services under this Contract, the Company is obliged to ensure the Client's right to confidentiality of using postal services, in accordance with the Legislation and other legal acts of the Republic of Armenia.

5.2 Ընկերությունը պարտավորվում է որևէ ձևով երրորդ անձանց չհայտնել և այլ կերպով չհրապարակել Հաճախորդի վերաբերյալ իրեն հայտնի առևտրային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունները, բացառությամբ օրենքով սահմանված կարգով նշված տեղեկությունների տրամադրման Ընկերության պարտավորության դեպքերի:

5.2 The Company is obliged not to communicate to a third party anyhow and not to publish in any other way the available information about the Client, containing commercial or other secret, with the exception of the cases when the Company is obliged to do so in a procedure under Law.

5.3 Հաճախորդը պարտավորվում է չհրապարակել սույն պայմանագրով Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ չճշտված և ոչ հավաստի այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են վնաս հասցնել Ընկերության համբավին և հանգեցնել սպառողների մոտ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ ոչ հավաստի կարծիքի ձևավորմանը: Հաճախորդը պարտավորվում է որևէ ձևով երրորդ անձանց չհայտնել և այլ կերպով չհրապարակել Ընկերության վերաբերյալ իրեն հայտնի առևտրային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունները, բացառությամբ օրենքով սահմանված կարգով նշված տեղեկությունների տրամադրման Հաճախորդի պարտավորության դեպքերի:

5.3 The Client is obliged not to publish any such unclear and false information about the provision of Services under the present Contract, which may damage the Company's reputation and bring to formation of wrong opinion among consumers concerning the services provided by the Company. The Client is obliged not to communicate to a third party anyhow and not to publish in any other way the available information about the Company, containing commercial or other secret, with the exception of the cases when the Client is obliged to do so in a procedure under Law.

## Գլուխ 6. Առաքանու հանձնումը հասցեատիրոջը (ստացողին)

## CHAPTER 6. ITEM PROVISION TO ADDRESSEE (RECEIVER)

6.1 Նամակագրական թղթակցություն հանդիսացող գրանցվող (պատվիրված) կամ գնահատված փոստային առաքանիները, ինչպես նաև հեռագրերը և մինչև երկու կիլոգրամ քաշը չգերազանցող գրանցվող այլ փոստային առաքանիները (սույն գլխի իմաստով այսուհետ՝ գրանցվող առաքանի), ստացողի հասցեն սպասարկող փոստային բաժանմունք մուտքագրվելու օրը Ընկերության փոստատարի միջոցով աշխատանքային ժամերի ընթացքում առաքվում են ըստ առաքանիների վրա նշված հասցեների:

6.1 The registered or insured items of mail correspondence, as well as telegraphs and other registered postal items whose weight does not exceed two kilograms (within the framework of the present Chapter hereinafter: registered items) are being delivered by means of the Company's postmen on the day when they are introduced in the post office attending the receiver's address during the working hours, per the addresses indicated on the items.

6.2 Փոստատարի առաջին այցելության ժամանակ հասցեատիրոջ բացակայության դեպքում փոստատարը նման առաքանին վերադարձնում է փոստային բաժանմունք՝ հաջորդ օրը առաքելու նպատակով:

6.2 In the absence of the addressee during the first visit the postman takes the item back to the post office, in order to deliver it on the next day.

6.3 Հաջորդ օրը հասցեատիրոջ բացակայությունը կրկնվելու դեպքում, փոստատարը հասցեատիրոջ համար թողնում է ծանուցագիր՝ փոստային բաժանմունք ներկայանալու և չհանձնված գրանցվող փոստային առաքանին ստանալու մասին:

6.3 In the absence of the addressee on the next day, too, the postman leaves a notification to the addressee, informing about the necessity to visit the post office and to pick the undelivered registered postal item.

6.4 Սույն գլխի 6.3 կետում նշված ծանուցագիրը փոստատարը տեղադրում է տվյալ հասցեի փոստային բաժանորդային արկղում կամ փոստային բաժանորդային պահարանի համապատասխան խցիկում: Փոստային բաժանորդային արկղի կամ փոստային բաժանորդային պահարանի բացակայության դեպքում փոստատարը ծանուցագիրը հանձնում է տվյալ հասցեում բնակվող չափահաս անձանցից մեկին, իսկ դրա անհնարինության դեպքում ծանուցագիրը փակցնում է մուտքի դռանը:

6.4 The postman puts the notification envisaged by the Clause 6.3 of the present Chapter in the postal subscription box of corresponding address or in the corresponding shelf of the postal subscription cabinet. If there is neither a postal subscription box nor a postal subscription cabinet, the postman gives the notification to some adult inhabiting in the same address, and if it is impossible, attaches the notification on the entry door.

6.5 Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաճախորդներին ուղղված գրանցվող առաքանիների հանձնման

6.5 In order to ensure the delivery of registered items addressed to clients which are legal entities or private

գործընթացն ապահովելու նպատակով Հաճախորդը առաքանու հասցեագրումն իրականացնելիս նշում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն ներկայացուցչի անունը, որն իրավասու է ստանալու իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը հասցեագրված փոստային առաքանին: Հաճախորդի կողմից սույն կետում նշված՝ փոստային առաքանին ստանալու իրավասություն ունեցող անձի անունը չնշվելու դեպքում առաքանիները փոստատարի կողմից հանձնվում են իրավաբանական անձի դեպքում՝ վերջինիս ղեկավարին կամ ղեկավարի կողմից լիազորված անձին կամ ղեկավարի հրամանով սահմանված աշխատակցին, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անձամբ անհատ ձեռնարկատիրոջը կամ վերջինիս կողմից լիազորված անձին կամ անհատ ձեռնարկատիրոջ հրամանով սահմանված աշխատակցին:

entrepreneurs, the Client shall mention when addressing the item the name of the representative of the legal entity or private entrepreneur who is entitled to receive the postal item addressed to the legal entity or private entrepreneur. If the Client does not mention the name of the person entitled to receive the postal item, as stipulated by this Clause, the postman provides the items to the manager of the legal entity, to the person authorized by the manager or the employee designated by the manager's order, in case of legal entity, and to the private entrepreneur, to the person authorized by the private entrepreneur or the employee designated by the latter's order, in case of private entrepreneur.

6.6 Սույն գլխի 6.3 կետում նշված չհանձնված փոստային առաքանիները վերադաձվում են փոստային բաժանմունք, որտեղ նշված առաքանիները պահվում են 30 (երեսուն) օր: Սույն կետում նշված երեսունօրյա ժամկետի ընթացքում հասցեատերը (հասցեատիրոջ ներկայացուցիչը) կարող է ներկայանալ փոստային բաժանմունք և ստանալ փոստային առաքանին:

6.6 The undelivered postal items, envisaged by the Clause 6.3 of this Chapter, are returned to the post office. where the mentioned items are kept within 30 (thirty) days. Within the term of thirty days mentioned in this Clause, the addressee (the representative of addressee) can visit the post office and pick the postal item.

6.7 Երեսունօրյա ժամկետը լրանալուց հետո չհանձնված փոստային առաքանին Ընկերությունը սույն պայմանագրով սահմանված կարգով վերադարձնում է Հաճախորդին՝ նշելով չհանձնման պատճառը, որը լրացվում է CN 15 ձևաթղթի վրա:

6.7 After the expiration of the period of thirty days, the Company returns the undelivered postal item to the Client according to the procedure under this Contract, mentioning the corresponding reason of non-delivery on CN 15 blank.

6.8 Սույն գլխով նախատեսված առաքանիների պահման երեսունօրյա ժամկետը Հաճախորդի գրավոր պահանջով կարող է կրճատվել և սահմանվել Ընկերության կողմից առաջարկվող այլ ժամկետ:

6.8 The period of thirty days, envisaged for the items' custody by this Chapter, can be reduced according to the written request of the Client and replaced by another period, proposed by the Company.

6.9 Սույն պայմանագրի շրջանակներում փոստային ծանրոցների և 2 (երկու) կիլոգրամը գերազանցող այլ առաքանիների, ինչպես նաև ցպահանջ բոլոր տեսակի առաքանիների հանձնումն իրականացվում է փոստային բաժանմունքներից: Մինչև 2 (երկու) կիլոգրամ բոլոր առաքանիներն Ընկերության կողմից առաքվում են հասցեական առաքման կարգով, և առաքանիների հանձնումն իրականացվում է ստացողի բնակության, գործունեության կամ գտնվելու վայրում՝ ըստ առաքանու վրա նշված հասցեի:

6.9 The provision of postal parcels and other items exceeding 2 (two) kilograms, as well as all kinds of items on demand, is carried out within the framework of this Contract from the post offices. All the items weighting up to 2 (two) kilograms is sent by the Company according to the order of addressed delivery, and the provision of items is carried out in the residence, business address or legal address of the receiver, as per the address indicated upon the item.

6.10 Հասարակ (չգրանցվող) նամակագրական թղթակցությունը (այսուհետ՝ Հասարակ նամակ), այդ թվում առանց ծրարավորման առաքվող հասարակ ձևակերպմամբ այլ առաքանիները (հասարակ բացիկներ, ծանուցումներ, CN07 հետծանուցումներ և այլն) ստացողի հասցեն սպասարկող փոստային բաժանմունք մուտքագրվելու օրը Ընկերության փոստատարի միջոցով աշխատանքային ժամերի ընթացքում առաքվում են ըստ առաքանիների վրա նշված հասցեների: Հասարակ նամակների հանձնումն իրականացվում է դրանք փոստային բաժանորդային արկղում կամ փոստային բաժանորդային պահարանի համապատասխան խցիկում տեղադրելու միջոցով: Փոստային բաժանորդային արկղի կամ փոստային բաժանորդային պահարանի բացակայության դեպքում հասարակ նամակները հանձնվում է տվյալ հասցեում բնակվող չափահաս անձանցից որևէ մեկին, իսկ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում նման առաքանիները հանձնվում են սույն պայմանագրի 6.5 կետով սահմանված իրավասու անձանցից որևէ մեկին:

6.10 The ordinary (unregistered) mail correspondence (hereinafter: Ordinary letter), including other items registered in ordinary way (ordinary postcards, notifications, CN07 advices of receipt etc.) are being delivered to the addresses indicated upon the items by means of the Company's postman on the same day of receipt by the post office attending the receiver's address, during the working hours. The ordinary letters provided within the framework of this Contract by placing them in the postal subscription box or corresponding cell of the postal subscription cabinet. If there is neither a postal subscription box nor a postal subscription cabinet, the ordinary letters are being provided to some adult inhabiting in the same address, and in case of legal entity or private entrepreneur, similar items are being provided to any entitled person envisaged under the Clause 6.5 of this Contract.

6.11 Գրանցվող փոստային առաքանիները հասցեատիրոջը (ստացողին) հանձնվում են անձը հաստատող փաստաթղթի հիման վրա: Փոստատարն ստուգում է հասցեատիրոջ (ստացողի) անձը հաստատող փաստաթուղթը և գրանցվող առաքանին հանձնում է բացառապես առաքանու վրա նշված ստացողին: Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում, եթե առաքանու վրա նշված չէ առաքանին ստացող իրավասու անձի անունը, ապա գրանցվող փոստային առաքանիների հանձնումն իրականացնելիս, մինչև առաքանու հանձնումը, փոստատարն ստուգում է սույն պայմանագրի 6.5 կետով սահմանված առաքանին ստանալու իրավասություն ունեցող անձի

6.11 The registered postal items are provided to the addressee (receiver) on the basis of the identification document. The postman checks out the identification document of the addressee (receiver) and provides the registered item exclusively to the receiver indicated upon the item. In case of legal entity or private entrepreneur, if no name of entitled receiver is indicated upon the item, the postman shall verify the identity document of the person entitled to receive the registered postal item under the Clause 6.5 of this Contract, before carrying out the provision of the item.

անձը հաստատող փաստաթուղթը:

6.12 Սույն պայմանագրի շրջանակներում Հաճախորդի կողմից առաքված, սակայն «Ոչ Ընկերության մեղքով չհանձնված» բոլոր առաքանիները վերադարձվում են Հաճախորդին, բացառությամբ միջազգային փոստային ծառայությունների պայմաններով սահմանված որոշակի դեպքերի, որոնք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և դրանց հիման վրա համապատասխան պետությունների կողմից սահմանված փոստային կանոններով:

6.13 Առաքված, սակայն «Ոչ Ընկերության մեղքով չհանձնված» միջազգային առաքանիները վերադարձվում են Հաճախորդին՝ վերջինիս կողմից վերադարձման համար սահմանված ծառայության արժեքը վճարելու դեպքում: Ներհանրապետական առաքումների դեպքում առաքանիների հետվերադարձը կատարվում է անվճար:

6.14 Սույն պայմանագրի իմաստով «Ոչ Ընկերության մեղքով չհանձնված» են համարվում հետևյալ այն դեպքերը, երբ Ընկերությունը կատարել է սույն պայմանագրով սահմանված իր պարտականությունները, սակայն առաքանին հասցեատիրոջը չի հանձնվել՝

ա) հասցեի սխալ լինելու պատճառով,
բ) հասցեի փոփոխության պատճառով,
գ) հասցեատիրոջ բացակայության պատճառով,
դ) առաքանու վրա նշված հասցեում հասցեատիրոջ չբնակվելու կամ չգտնվելու պատճառով,
ե) հասցեատիրոջ կողմից առաքանին ստանալուց հրաժարվելու պատճառով,
զ) գրանցվող առաքանիների դեպքում՝ հասցեատիրոջ ինքնությունը պարզելու անհնարինության դեպքում (անձը հաստատող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում),
է) Ընկերությունից անկախ այլ պատճառով:

6.15 Սույն պայմանագրի իմաստով հասցեն համարվում է ստույգ, եթե առաքանու վրա լրացված հասցեում առկա են հետևյալ չափանիշները ներկայացված հերթականությամբ՝

ա) անուն ազգանուն,
բ) փողոց, տուն, շենքի համար, բնակարանի համար,
գ) բնակավայրի անվանում /մարզ, քաղաք, գյուղ/,
դ) փոստային դասիչ:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առաքվող առաքանու դեպքում լրացվում են նաև պետության անվանման դաշտը, ինչպես նաև արտասահման առաքվող առաքանու ձևակերպման համար սահմանված վավերապայմաններն ու ձևաթղթերը:

6.16 Միջազգային փոստային առաքանիների ընդունման, ձևակերպման, առաքման և հանձնման, ինչպես նաև հետվերադարձի հետ կապված գործընթացների առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (Համաշխարհային փոստային միության ակտերով):

6.17 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանները (նաև սույն պայմանագրում նշված պայմանները) սահմանված են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և փոստային կապի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավական ակտերով: Հաճախորդի պահանջով Ընկերությունը պարտավոր է ամբողջական և մատչելի տեղեկատվություն տրամադրել Հաճախորդին ծառայությունների մատուցմանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ:

## Գլուխ 7.Վեճերի լուծման կարգը

7.1 Սույն պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով:

6.12 All the items dispatched by the Client in the frames of this Contract, but "undelivered not by the Company's fault", are returned to the Client, except in certain cases envisaged by the international postal service conditions, which are regulated by the international agreements of the Republic of Armenia and consecutive postal rules, envisaged by corresponding countries.

6.13 The international items, dispatched but "undelivered not by the Company's fault", are returned to the Client, if the latter pays the fee envisaged for the service of return. In case of domestic deliveries the items are being returned for free.

6.14 The following cases are stipulated as "undelivered not by the Company's fault" by the present Contract, when the Company carries out the obligations assumed by the Contract, but the item is not received by the addressee:

a) the address is incorrect;
b) the address is changed;
c) the addressee is absent;
d) the addressee does not inhabit or is not at the address indicated on the item;
e) the addressee refuses to receive the item;
f) in case of registered items: it is impossible to find out the addressee's identity (no identification document is presented);
g) other reason not depending on the Company.

6.15 An address is considered correct within the framework of this Contract, if the address filled upon the item contains the following criteria in the given sequence:

a) name surname,
b) street, house, building number, apartment number,
c) name of location (region, city, village),
d) postal index.

In case of the item's delivery out of the Republic of Armenia, the field of the country name must be filled in, too, as well as the requisites and blanks envisaged for the registration of the item delivered to abroad.

6.16 The peculiarities of the international postal items' acceptance, registration, delivery and provision, as well as return processes are defined by the international agreements of the Republic of Armenia (statements of the Universal Postal Union).

6.17 The conditions of the postal service provision (including the conditions mentioned in this Contract) are defined by the international agreements of the Republic of Armenia and corresponding legal acts of the Republic of Armenia, regulating the postal communication activity. The Company is obliged to provide complete and accessible information about any issue related to the provision of services to the Client, at the latter's request.

## CHAPTER 7. SETTLEMENT OF DISPUTES

7.1 All the disputes and discrepancies arisen out in relation to this Contract shall be settled through negotiations.

7.2 Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

**Գլուխ 8. Եզրափակիչ դրույթներ**

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից և գործում է մինչև 2018թ.-ի դեկտեմբերի 20-ը: Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են 01.01.2018թ.-ից ( քաղ. օրենսգրքի 441 հոդված, 2-րդ մաս):

8.2 Սույն պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը՝ սույն պայմանագրի Կողմերից որևէ մեկի առաջարկության առկայության դեպքում պայմանով, որ Հաճախորդի մոտ չի վերացել փոստային ծառայություններից օգտվելու պահանջը:

8.3 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

8.4 Սույն պայմանագրով սահմանված փոստային կապի ծառայությունների գների (սակագների), ինչպես նաև Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանների փոփոխությունների դեպքում, Ընկերությունը փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է Հաճախորդին իր փոստային բաժանմունքների, ինչպես նաև Ընկերության՝ **www.haypost.am** ինտերնետային կայքի միջոցով:

8.5 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմաններին և ժամկետներին և նշված ծառայությունների գներին (սակագներին) չվերաբերվող սույն պայմանագրի այլ փոփոխությունները կամ լրացումները կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով:

8.6 Սույն պայմանագրով նախատեսված՝ պայմանագրի լուծման դեպքերից բացի սույն պայմանագիրը կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ ցանկացած ժամանակ՝ այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելու պայմանով:

8.7 Կողմերը համաձայնվում են, որ եթե սույն պայմանագրի գործողության ընթացքում Հայաստանի Հանրապետության համապատասխան նորմատիվ իրավական ակտերով և/կամ միջազգային պայմանագրերով սահմանվեն ծառայությունների մատուցման այլ պայմաններ, ի համեմատ սույն պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման պայմանների, ապա Կողմերը կառաջնորդվեն համապատասխան նորմատիվ իրավական ակտերով կամ միջազգային պայմանագրերով սահմանված ծառայությունների մատուցման պայմաններով:

8.8 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող չորս (4) օրինակից: Պայմանագրի 3 (երեք) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին: Հայերեն և անգլերեն տեքստերի մեջ տարընկալումներ կամ հակասություններ լինելու դեպքում գործում է հայերեն տարբերակը:

8.9 Սույն պայմանագրով կատարված բոլոր գրավոր ծանուցումներն ընդունելի են Կողմերի կողմից, եթե դրանք կատարվել են սույն պայմանագրի Գլուխ 9-ով սահմանված իրավաբանական հասցեներով կամ էլեկտրոնային եղանակով՝ հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեներով՝

**Ընկերություն** ՝ namakanish@haypost.am

**Հաճախորդ՝** gnumner.mnp@yandex.com

7.2 If the Parties fail to reach an agreement by means of negotiations, the disputes shall be solved by Court, in compliance with the Legislation and other legal acts of the Republic of Armenia.

**CHAPTER 8. CONCLUSIVE TERMS**

8.1 This Contract comes into force and becomes obligatory for the Parties from the moment of signing and remains valid till 20.12.2018. The terms of the present contract will be effective since 01.01.2018 (441 art. Of Civil Code of RA).

8.2 The deadline of this Contract can be prolonged before the expiration of this deadline, if one of the Parties makes a suggestion provided that the Client still has the demand to use postal services.

8.3 This Contract cannot be partially or fully terminated by mutual agreement between the Parties except according to the order determined by the Legislation of the Republic of Armenia.

8.4 In case of changes in postal service prices (tariffs) and Postal service provision conditions under this Contract, the Company provides the Client with the information on changes via its post offices as well as from the Company's website: **www.haypost.am**.

8.5 Other amendments or supplements of this Contract, not related to the postal service provision conditions, terms and prices (tariffs), are being carried out according to the mutual consent of the Parties, by signing supplementary agreements envisaged by the Legislation of the Republic of Armenia.

8.6 Besides the cases of Contract termination envisaged by this Contract, the Contract can be terminated also anytime by the initiative of each Party, provided that the other Party is informed about it in written one month before.

8.7 In case of adoption of other conditions of service provision by corresponding normative legal acts and/or international agreements of the Republic of Armenia within the period of action of the present Contract, differing from the service provision conditions envisaged by the present Contract, the Parties agree to follow the service provision conditions adopted by the corresponding normative legal acts or international agreements.

8.8 This Contract is drawn out in two equally binding copies in the Armenian and English languages. The Company keeps 3(three) copies of the Contract and 1(one) copy is given to the Client. In case of misunderstandings or contradictions between the Armenian and English versions the Armenian version shall prevail.

8.9 All the written notices made under this Contract are acceptable by the Parties, if they have been made via the legal addresses provided by Chapter 9 of this Contract or by the e-mail addresses as follows:

**Company:** namakanish@haypost.am

**Client:** gnumner.mnp@yandex.com

8.10 Սույն պայմանագրի 9-րդ գլխում նշված վավերապայմաններում և սույն պայմանագրի կնքման համար Հաճախորդի ներկայացրած դիմումում և դրան կից փաստաթղթերում փոփոխություններ կատարվելու դեպքերում Կողմերը ծանուցում են միմյանց այդ մասին համապատասխան փոփոխությունը կատարվելուց հետո եռօրյա ժամկետում կամ անհապաղ, եթե փոփոխությունը վերաբերվում է բանկային վավերապայմաններին և էլեկտրոնային փոստի հասցեին:

8.10 In case of making changes in the requisites under Chapter 9 of the present Contract and the application submitted by the Client for signing the present Contract, as well as in the documents attached, the Parties notify one another within three days after the change has been made, or immediately, if the change relates to the bank requisites and e-mail addresses.

**Գլուխ 9. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**CHAPTER 9. ADDRESSES OF THE PARTIES, BANK REQUISITES AND SIGNATURES**

**Ընկերություն՝ / Company:**

«Հայփոստ» ՓԲԸ /
"Haypost" CJSC,
ք.Երևան, Սարյան 22 /
22 Saryan street, Yerevan
ՀՎՀՀ / Tax code: 02507464
«Կոնվերս բանկ» ՓԲԸ /
"Converse bank" CJSC
ՀՀ / Account number: 1930003703156000
Հեռ.՝/ Tel: /010/ 514-548

Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար՝ /
Acting Chief Executive Officer

------------ Ավագյան / H. Avagyan

**Հաճախորդ՝ / Client:**

ՀՀ բնապահպանության նախարարություն /
Ministry of the Nature Protection of the RA
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք /
Government building 3, Yerevan
ՀՎՀՀ / Tax Code: 02507198
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն /
RA MoF Operational Department
ՀՀ / Account number: 900011018646
Հեռ.՝/ Tel.: /011/ 818-514, /011/ 818-520

Աշխատակազմի ղեկավար՝ /
Chief of Staff:

------------ Հովհաննիսյան / H. Hovhannisyan

Կատ.՝ Լուսինե Հովսեփյան
Հեռ.՝ 514-548

**Հավելված 1**
«Հայփոստ» ՓԲԸ և ՀՀ բնապահպանության նախարարության միջև
14.02.2018թ.-ին կնքված թիվ PD-111-02-18 պայմանագրի
**Annex 1**
of the Contract № PD-111-02-18 signed on 14.02.2018
between "Haypost" CJSC and Ministry of the Nature Protection of the RA

**ՀԱՅՏ**
**REQUEST**
(Նամականիշեր և/կամ ծրարներ ձեռք բերելու վերաբերյալ)
(On obtaining stamps and covers)

Հայտնում ենք Ձեզ, որ «Հայփոստ» ՓԲԸ և ՀՀ բնապահպանության նախարարության միջև 14.02.2018թ.-ին կնքված թիվ PD-111-02-18 պայմանագրի գործողության շրջանակներում ցանկանում ենք «Հայփոստ» ՓԲԸ-ից ձեռք բերել (գնել) նամականիշեր և/կամ ծրարներ՝

| Ծրար | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Անվանումը | Անվանագինը | | | | Քանակը (հատ) |
| | մինչև 3000 հատ | 3001-8000 հատ | 8001-15000 հատ | 15001 և ավելի հատ | |
| Ծրար /C6 114 մմ * 162 մմ/ | 25 | 20 | 15 | [illegible] | |
| Ծրար /DL 110 մմ * 220 մմ/ | 60 | 22 | 17 | [illegible] | |
| Ծրար /C5 162 մմ * 229 մմ/ (A5) | 90 | 39 | 30 | 20 | |
| Ծրար /C4228 մմ * 324 մմ/ (A 4) | 120 | 63 | 47 | 35 | |

| Նամականիշ | | |
|---|---|---|
| Անվանումը | Անվանագինը | Քանակը (հատ) |
| Նամականիշ | 35 | |
| Նամականիշ | 40 | |
| Նամականիշ | 50 | |
| Նամականիշ | 60 | |
| Նամականիշ | 70 | |
| Նամականիշ | 100 | |
| Նամականիշ | 120 | |
| Նամականիշ | 160 | |
| Նամականիշ | 170 | |
| Նամականիշ | 200 | |
| Նամականիշ | 220 | |
| Նամականիշ | 230 | |
| Նամականիշ | 240 | |
| Նամականիշ | 280 | |
| Նամականիշ | 300 | |
| Նամականիշ | 330 | |
| Նամականիշ | 350 | |
| Նամականիշ | 380 | |
| Նամականիշ | 400 | |
| Նամականիշ | 450 | |
| Նամականիշ | 500 | |
| Նամականիշ | 560 | |
| Նամականիշ | 650 | |
| Նամականիշ | 870 | |
| Նամականիշ | 1100 | |

Նմուշ

----------------------- -------------- Հայտի ընդհանուր գումարը

-------------------------------------- -------------- -------------------------
(հայտատու) (ստորագրությունը, կնիքը) (անունը, ազգանունը)